

բակլ զօրավար յեղիպտոսէ՝ ի Կոստանդինուպօլիս, տպան զՓոկաս (610) եւ նոսոյց զօրդի իւր զՀերակլէս յաթոռ թագաւորութեան։ Եւ Խոսրով արքայն Պարսից աւերէր եւ քանդէր զաշխարհն Յունաց ի վրէժ քինու տարապարտ արեանն Մօրկայ, եւ սպան զդեսպանս Հերակլէայ։ Եւ ի ճակատին Անտիօքայ ի պարտութիւն մատնեցան Յոյնք զօրքն Պարսից արշաւեալ մօին ի Կիլիկիա, եւ լցին զայն արեամբ եւ գերութեամբ՝ եւ առին զքաղաքն Տարսոն, եւ հասին մինչեւ ի սահմանս Երկրին Պաղեստինոյ, որոյ բռնակիչք կամօք մօին ի ծառայութիւն նոցին։ Իբրեւ լուեղեւ յերուսաղէմ, թէ ահա հասեալ կան Պարսիկք, մնացորդք ազգին Եբրայեցւոց ժամ դիպող գտեալ ապստամբեցան ի Քրիստոնէից, եւ գործեցին զմեծամեծ չարիս անդ յերուսաղէմ, սպառնացեալ ջնջել իսպառ զքրիստոնեայն ի քաղաքէ անտի եւ կործանել զՍ. Տեղիսն։ Եւ ապա միաբանեալ՝ մեծամեծ պատարագօք դիմեցին առ Խորեամ զօրավար, որ նստէր յայնժամ ի Կեսարիա Պաղեստինացւոց։ Ընկալեալ զօրավարին զընծայսն ի ձեռաց նոցա եւ ետ ոստիկան քաղաքին իւրեանց։ Եւ զինի աւուրց ինչ չմիաբանեալ Քրիստոնէից ընդ Եբրայեցիս, յարուցին աղմուկ մեծ ի քաղաքին Երուսաղէմի։ սպանին զոստիկանն եւ քարչեալ ընկեցին ի բաց։ եւ սկսան Քրիստոնեայք եւ Հրէայք կոտորել զմիմեանս, եւ զօրացեալ Քրիստոնէից հարին ի բերան սրոյ եւ սատակեցին զբազումս յԵբրայեցւոց։ Իսկ ապրեալքն ի սրոց անկեալ ի պարսպաց քաղաքին զերծան ի բանակն Պարսից եւ չարախօս լեալ դրդուեցին զնոսա ընդդէմ Քրիստոնէից։

Յայնժամ մրմուռեալ Խոռեմայ՝ ժողովեաց զբազմութիւն զօրաց իւրոց, եւ եկեալ պաշարեաց զԵրուսաղէմ, եւ մարտ եղեալ կռուէին յաւուրս 18, փորեցին գլխիմունս պարսպին եւ կործանեցին զայն, եւ յաւուրն 19 ի յամսեանն Մարգաց, որ օր 27 էր ամսոյն, 27 ի յամի թագաւորութեան Ապրուհն Խոսրովայ Պարսից արքայի, զինի 10 աւուր Զատկին, առին զքաղաքն Երուսաղէմ (614)։ եւ խուժեցին ի ներքս ի քաղաքն զօրքն Պարսից եւ սուր եղեալ կոտորեցին անխնայ զմարդիկ մինչեւ ցաւուրս երիս, այրեցին հուրք զքաղաքն եւ աւերեցին զեկեղեցիս Ս. Տեղեաց ընդ